Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ. հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Մշակութային և լեզվական գրագիտություն կարողունակությունների ձևավորումը Մայրենիի «Մեր լավաշ հացը» թեմայի («Երգ ու տաղ» բաժին) դասավանդման ընթացքում
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Սոնա Կնյազյան Աշոտի Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի +37493587556 sonaknyazyan734@gmail.com knyazyansona@mail.ru Մայրենի, Հայոց լեզու, Գրականություն V-XII

Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Բյուրեղավանի Ս. Վարդանյանի անվան ավագ դպրոց Ք. Բյուրեղավան, Կոտայքի 63 byureghavanavag@gmail.com https://byureghavanh.schoolsite.am/

Պետք է լինի 1-2 էջ

Բովանդակություն

Ներածություն **3**
Հիմնական բովանդակություն **6**
Հետազոտության ընթացքը **17**
Եզրակացություններ, առաջարկություններ **20**
Այլ տեղեկություններ **22**
Օգտագործված գրականության ցանկ **23**
Հավելվածներ **24-34**

1 էջ

1

Ներածություն

| **Նպատակը եւ հետազոտական հարցը** | **Հետազոտական աշխատանքի նպատակները**

Սահմանելով կարողունակություն (կոմպետենցիա)» եզրույթը, որը մանկավարժական գրականության մեջ սկսել է շրջանառվել անցած դարի 70-80-ական թվականներից. բարձր արդյունավետության հասած մարդկանց վարքի, գործունեության ուսումնասիրությունների արդյունքում ձևակերպված նրանց ընդհանրությունները միավորող որակների համալիրը, խումբն է կոչվում կոմպետենցիա, փորձենք հետազոտության միջոցով պարզել, ցույց տալ մեկ օրինակ՝ մայրենի առարկայի շրջանակներում ինչպես կարելի է նպաստել կարողունակությունների ձևավորմանը՝ նկատի ունենալով հետևյալ **խնդիրները.**

1.հանրակրթությունը պետք է ձևավորի այնպիսի կարողունակություններ, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր անհատի արագ փոփոխվող հասարակությունում հաջողությամբ կազմակերպելու իր առօրյա կյանքն ու գործունեությունը:
2.Միայն նեղ առարկայական դաշտում գիտելիքների հաղորդումը և հմտությունների ձևավորումը բավարար չէ, այլ անհրաժեշտ է հանրակրթության նպատակների առավել լայն գիտակցում:
3.Բոլորի համար պարտադիր պահանջների շարքում նեղառարկայական գիտելիքներից և գործնականում դրանք կիրառելու կարողություններից բացի, որոշիչ դեր են սկսում խաղալ համապիտանի |

	կարողունակությունները, որոնք աստիճանաբար դառնում են համընդհանուր գրագիտության պարտադիր բաղադրատարրեր: 4. Եվ առանձին առարկաների բովանդակության վրա կառուցված կրթական մոդելն իր դիրքերն արագորեն զիջում է առանցքային կարողունակությունների վրա հիմնված կրթական մոդելին: Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ձևավորել կարողունակություններ մայրենիի դասաժամերին՝ 5-րդ դասարանի սովորողների համար կարողունակությունների ձևավորման մեթոդական երաշխավորություններից, ուսումնական գործունեության տարատեսակ ձևերից (ինչպիսիք են՝ բանավեճը, ուսումնական ֆիլմերի դիտումը և քննարկումը, սեմինարները, դպրոցական գիտաժողովները, ներկայացումները և այլն), ընտրելով էքսկուրսիան: **Հետազոտական աշխատանքի հարցը** Ինչպե՞ս զարգացնել մշակութային, լեզվական գրագիտություն կարողունակությունները մայրենիի դասաժամերին
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Նպատակի ուսումնասիրությունն ուղղված է հետևյալ կարողունակություններին /կոմպետենցիաներին/. • լեզվական գրագիտություն և կարողունակություն, • մշակութային կարողունակություն,

	• ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	5-րդ դասարան 34 սովորող (15տղա, 19աղջիկ)
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Հետազոտական աշխատանքը իրականացվել է դիտարկման մեթոդով
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	29.09 2023 թվա կան

1-2 էջ

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ

- Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից,
- Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից:

<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>

Կարողունակությունը անհատի համալիր բնութագրիչ է. այն գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների համակարգ է, որը թույլ է տալիս այս կամ այն ոլորտում հաջողությամբ լուծելու որոշակի խնդիրներ: Համաձայն այս սահմանման՝ եթե որևէ մեկը հավակնում է կարողունակ լինել որևէ բնագավառում, ապա նա պետք է տիրապետի այդ բնագավառին բնորոշ որոշակի **գիտելիքների, հմուտ** լինի այդ բնագավառում որոշակի գործունեություն ծավալելու, պետք է ունենա **արժեքային որոշակի համակարգ** և կարողանա իր **դիրքորոշումն** արտահայտել այդ բնագավառի որոշակի հարցադրումների, երևույթների վերաբերյալ:



Գծապատկեր 1.

Կարողունակությունը նշված բոլոր չորս որակների համատեղ առկայությունն է (գծապատկեր 1), և դրանցից որևէ մեկի բացակայությունը թույլ չի տալիս սովորողին

	կամ քաղաքացուն հաջողությամբ լուծելու իր առջև ծառացած խնդիրները: Կարողունակությունը չի կարելի համարել վերջնականորեն ձևավորված որևէ արդյունք: Վերջինիս ձևավորումն անընդհատ գործընթաց է, որի ժամանակ այն անընդհատ կարող են կատարելագործվել: Կարողունակությունների ձևավորումը սկսում է վաղ մանկությունից և շարունակվում է ամբողջ կյանքի ընթացքում: Միջնակարգ կրթության կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788 **Հանրակրթության պետական չափորոշիչը ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից** և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ), ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը:

Կարողունակությունները որպես հանրակրթության նոր չափորոշչի հենասյուներ

Հանրակրթության պետական նոր չափորոշչով որպես հանրակրթության գերագույն նպատակ սահմանվել է ութ առանցքային կարողունակությունների ձևավորումը.

1) լեզվական գրագիտություն և կարողունակություն,
2) սովորել սովորելու կարողունակություն,
3) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,
4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,
5) թվային և մեդիա կարողունակություն,
6) մշակութային կարողունակություն,
7) մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն,
8) տնտեսական կարողունակություն:

Սովորել սովորելու կարողունակություն

	Ինքնաճանաչողություն և սոցիալական կարողունակություն New Activity Մշակութային կարողունակություն New Activity Տնտեսական կարողունակություն New Activity Թվային և մեդիա կարողունակություն New Activity Լեզվական գրագիտություն և կարողունակություն New Activity Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն New Activity

Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն

New Activity

Հանրակրթության պետական նոր չափորոշիչի հիմքում ընկած է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումը: Կրթության բովանդակությունը կառուցվում է համաձայն հետևյալ ստորակարգային սխեմայի (գծապատկեր 2):



Գծապատկեր 2

Այնուհետև ձևակերպվել են դպրոցի տարբեր աստիճանների շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները: Դրանք այն վերջնարդյունքներն են, որոնք կոչված են ձևավորելու առանցքային կարողունակությունները: Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված 8 կարողունակություններից է **Լեզվական գրագիտությունը և կարողունակությունը,** այն է. «Սովորողները տիրապետում են հայոց լեզվին, գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվում են մայրենի լեզվով և այլ օտար լեզուներով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների: Նրանք կիրառում են լեզուն՝ որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք: Ընդհանուր գրագիտությունը կազմում է սովորելու և լեզվական հաղորդակցության հիմքը, որի հիման վրա կարող են ձևավորվել գրագիտության մյուս ձևերը (քաղաքացիական, բնապահպանական, տնտեսական, ֆինանսական, իրավական, առողջապահական, գիտատեխնիկական, թվային և այլն): Այն լիարժեք դրսևորվում է ոչ միայն բոլոր առարկաների ուսումնական գործընթացում, այլև մեր հասարակության բոլոր ոլորտներում: Հաճախ բազմաթիվ թյուրըմբռնումներ են առաջանում լեզվի ոչ գրագետ կիրառության պատճառով:

Հանրակրթական պետական չափորոշչում **մշակութային կարողունակությունը** ներկայացվում է հետևյալ կերպ՝ Սովորողները ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների

	մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ: Նրանք արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետության դերը, ունեն Հայաստանի աշխարհագրության, հասարակական-քաղաքական համակարգի և պատմության հիմնարար իմացություն: Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Նրանք ի վիճակի են զարգացնել սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը և ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ: (ՀՊՉ 2021, (II, 3-րդ կետ) https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788 Ոչ ոք չի կարող դատել ուրիշների մասին, քանի դեռ չի սովորել դատել ինքն իր մասին: Ի. ԳՅՈԹԵ **«Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն** - Սովորողներն ընդունակ են ինքնանդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով ձգտել ինքնաճանաչման: Նրանք ձևավորում են վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ և հաջողությամբ կառավարում են սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները, կարողանում են դրսևորել

	առողջ և անվտանգ կենսակերպ, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշում: Սովորողները դրսևորում են հարգանք, ազնվություն և պատասխանատվություն ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից, բարեկեցության աստիճանից, արտաքին տեսքից, ընդունակություններից, մասնագիտությունից, համոզմունքներից և այլ առանձնահատկություններից: Նրանք սոցիալական հարաբերություններում գործում են կառուցողական և համերաշխ, դրսևորում են ընկերակցելու ունակություն և կոնֆլիկտների խաղաղ և համագործակցային կարգավորման հմտություններ: Տարբեր մշակույթների, կրոնների, աշխարհայացքների և կյանքի կազմակերպման անհատական պատկերացումների հետ առնչվելու արդյունքում սովորողներն ընդունակ են ճանաչել դրանց տարբերությունները:» Ինքնագիտակցությունը աշխարհի մասին վստահելի գիտելիքների միակ աղբյուրն է, կարծում էր Ռ. Դեկարտը: «Cogito ergo sum» («Ես կարծում եմ, հետևաբար ես գոյություն ունեմ»): Որպեսզի կարողանանք հնարավորինս արդյունավետ լինել, օգտվել մեր անձնային որակներից, կարողանանք լուծել մեր ներանձնային կոնֆլիկտները, կառուցել սեփական արժեհամակարգը և փոխհարաբերությունները, պետք է հնարավորինս լավ ճանաչենք մեզ: Եվ այն պետք է սկսել վաղ մանկությունից: Ներքին Ես-ի գիտակցումը հետաքրքիր է նաև նրանով, որ անձը միաժամանակ հանդիսանում է ուսումնասիրման և՛ օբյեկտ և՛ սուբյեկտ:

Ինքնաճանաչումն ու ինքնագիտակցությունը նաև կարևոր նախապայման են արդյունավետ հաղորդակցվելու, իր և շրջապատողների զգացմունքներն ու դրանց դրսևորումները հասկանալու, համագործակցելու և սոցիալական որակյալ վարք դրսևորելու համար:



Այս ամենը բերում է ուրիշների կարծիքը լսելուն և հարգելուն, տարաձայնությունները խաղաղ կարգավորել կարողանալուն, փոխօգնության, փոխադարձ վստահության նշանակությունը գիտակցելուն: Համագործակցության վրա հիմնված ուսուցման արդյունքում անձը հասարակությունն ընկալում է որպես փոխկապակցված համակարգ, ոչ թե առանձին անհատների խումբ: Տեսնում է, որ այդ համակարգում յուրաքանչյուրի գործողություններն ազդում են մյուսների գործողությունների վրա և, համապատասխանաբար, ազդեցություն են կրում վերջիններիս գործողություններից:

Այսօրվա կրթական պահանջն է զարգացնել սովորողի քննադատական, ստեղծագործական մտածողությունը,

ձևավորել կյանքի նկատմամբ ակտիվ վերաբերմունք ունեցող քաղաքացի: Եվ այս խնդրի առջև կանգնած ուսուցիչը պետք է կարողանա համահունչ քայլել կրթական համակարգում տեղի ունեցող գործընթացների հետ և իր գործողությունները պլանավորելիս հաշվի առնել ոչ միայն մատուցվող գիտելիքները, այլև այն թե ինչպես կարելի է այդ գիտելիքները հասանելի դարձնել աշակերտներին: Կրթական ոլորտի կարևոր, բաղկացուցիչ մասն են կազմում մանկավարժական տեխնոլոգիաները այսօր բոլորը խոսում են արդյունավետ ուսուցման և կրթության որակի բարելավման մասին: Ներկայումս կարևորվում է աշակերտների ակտիվ և նախաձեռնողական մասնակցությունը դասին, ինքնուրույնությունը, սեփական դատողություններ անելու կարողությունն ու հմտությունը: Ուսումնական գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է կիրառվող մեթոդներով, որոնք ապահովում են դասավանդողի և սովորողի փոխկապակցված գործունեությունը: Լայնորեն կիրառվում են նաև ուսուցման հնար կամ եղանակ հասկացությունները, որոնք կարելի է բնութագրել հետևյալ սահմանումներով՝

Ուսուցման մեթոդները ուսուցչի և սովորողի միասնական աշխատանքներն են, որով իրականացվում են կրթական նպատակները:

Ուսուցման մեթոդները ուսուցչի և սովորողի համատեղ գործունեությունն են, որոնց արդյունքում սովորողը ձեռք է բերում գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, ձևավորվում է նրա աշխարհայացքը և ճանաչողությունը:

	Ուսուցման մեթոդները մանկավարժի և սովորողի փոխկապակցված գործունեությունն են, որոնք կրթության, դաստիարակության և զարգացման խնդիրների իրականացման նպատակ ունեն: Չնայած տրված տարբեր սահմանումներին՝ կա մեկ որոշակի ընդհանրություն. ուսուցման մեթոդները մանկավարժի և սովորողի համատեղ աշխատանքն են ուսումնական գործունեություն կազմակերպելու նպատակով: Ուսուցման և դաստիարակության գործում ծագած խնդիրների լուծման կարևորագույն ուղիներից մեկը համարվում է ժամանակակից մանկավարժական և դաստիարակչական տեխնոլոգիաների մշակումն ու ներդրումը ուսուցման և դաստիարակության գործընթացում: Соловьёва Т. И., Современные педагогические технологии в начальной школе, Молодой учёный,Ежемесячный научный журнал, № 6 (86) / 2015, стр. 684
Հետազոտության ընթացքը	Ուսուցման արդյունավետ մեթոդներ գտա Ս. Խաչատրյանի «Ուսուցման արդյունավետ հնարներ» գրքում. «Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի

ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել: Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին»:

Ուսուցման պլանավորման փուլում օգտվեցի նաև Միլլերի աստիճանակարգումից, որը Հայաստանում մեծ տարածում չունի: Բայց այն շատ կարևոր է գիտելիքը վարքագիծ դարձնելու առումով: Առաջին մակարդակում սովորողը պարզապես գիտի: Գիտենալը ուսուցման հիմքն է: Բայց սա բավարար չէ: Կարևոր է գիտելիքը օպերացիոն դարձնելը: Այս առումով երկրորդ մակարդակում սովորողը պետք է գիտելիքը գործողության մեջ դնի և իմանա՝ ինչպե՞ս, այսինքն՝ հասկանա: Երրորդ մակարդակում սովորողը պետք է կարողանա ցույց տալ՝ ինչպե՞ս: Վերջապես չորրորդ մակարդակում պետք է կարողանա կիրառել: Եթե ուսուցման գործընթացում սովորողն անցնի չորս փուլերով, ապա կարելի է ասել, որ նա լիարժեք սովորել է նյութը:

Մայրենի առարկայի դասավանդման ընթացքում նկատի ունենալով այս կարողունակությունների ձևավորման սկզբունքները և տեսլականը, հաջող դաս իրականացնելու համար ուսուցման ավանդական մեթոդների կողքին կիրառել եմ նաև ինտերակտիվ մեթոդներ:

Դասի սկիզբ

Մասնակցային լավագույն մեթոդով՝ մտագրոհով սկսեցի դասը: Մտագրոհի միջոցով դասարանից հավաքեցի մտքեր տվյալ թեմայի՝ «Մեր լավաշ հացի» վերաբերյալ.
1. Երբևէ տեսե՞լ են լավաշի ստեղծման ընթացքը:
2. Ի՞նչ գիտեն լավաշի մասին, որպես մշակութային ժառանգություն:
3. Լսե՞լ են ՅՈՒՆԵՍԿՕ-ի մասին:

Նոր նյութի բացատրում

Պատմեցի՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում Հայաստանի կողմից ներկայացված «Լավաշ. ավանդական հացի պատրաստման, նշանակության եւ մշակութային դրսևորումների» ներառված լինելու մասին:
https://armenpress.am/arm/news/785546
Մեկնաբանեցի « Մեր լավաշ հացը մեր սրբությունն է» տողը: Սովորողները, իմ հարցերի օգնությամբ, գտան և բանաստեղծությունից դուրս բերեցին այն բառերը, որոնցով հեղինակը բնութագրել էր լավաշը. (մեր լավաշ հացը *մեր պարզությունն է, մեր պատմությունն է, մեր տրտմությունն է, մեր էությունն է, մեր Հաց-հավատը* աղոթք ու նշխար...) *Հաց*-ով բառեր և բառակապակցություններ կազմեցինք:

Ինտերակտիվ փուլ
Սովորողները մասնակցեցին լավաշի թխմանը: Անձամբ մասնակից դարձան հացի արարման ընթացքին: Ապա համտեսեցին իրենց թխած հացը. հյուրընկալվել էինք «Մամիկ» հյուրատանը:

Սովորածը պարզելու հնարներ

Դասի ավարտին կիրառեցի
Կիսատ նախադասություն մեթոդը

Բերված կիսատ նախադասությունների լրացումն օգնեց աշակերտներին ամփոփել դասը: Աշակերտները հնարավորություն ունեցան իրենց ցանկությամբ ընտրել այն կիսատ նախադասությունները, որոնք կուզեին ավարտել և ընտրեցին 5 հարց.
Ես այսօր սովորեցի...
Ինձ այսօր զամացրեց...
Ինձ ամենաշատը դուր եկավ...
Մի բան, որ կուզեի ավելին իմանալ...
Այս դասից հետո ես զգում եմ...

Ուսուցման ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռքբերմանը, մտածողության զարգացմանը, լեզվական հմտությունների, մշակութային հետաքրքրությունների, ինքնաճանաչողական ու սոցիալական կարողունակությունների ձևավորմանը:

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Հետազոտական աշխատանքի արդյունքների վերլուծությամբ եկել ենք հետևյալ եզրակացությունների. ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդները նպաստում են սովորողի լեզվական գրագիտության և կարողունակության, մշակութային, ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակությունների և հմտությունների ձևավորմանը: Նպաստելով հաղորդակցական, ինքնուրույն գործունեության որակներին, նաև բարձրացնում են սովորողների ուշադրությունը և առաջադիմությունը: **ինտերակտիվ** (փոխներգործուն) մեթոդները Մայրրենիի («Երգ ու տաղ» բաժնի) «Մեր լավաշ հացը» թեմայի դասավանդման ընթացքում կարող են արդյունավետ կիրառվել ու նպաստել սովորողների մշակութային, լեզվական գրագիտության, ինքնաճանաչողական կարողությունների ու հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը: Այս մեթոդները ավանդական մեթոդների հետ միասին ուսուցումը դարձնում են ավելի ճկուն, ապահովում ուսուցման արդյունավետության բարձրացումը:

	Պատասխան հետազոտական հարցին Մայրենիի դասաժամերին մշակութային, լեզվական գրագիտություն կարողունակությունները զարգացնելու լավագույն միջոց է ինտերակտիվ փոխներգործուն մեթոդներով պլանավորված դասերը: Այդպիսի դասերին ակտիվորեն մասնակցում են բոլոր աշակերտները, որովհետև այդ դասերը հետաքրքիր են, մատչելի, գրավիչ: Նպաստում են ուսումնական նյութի հեշտ յուրացմանը, ինչպես նաև, սովորողները կարողանում են ձեռք բերած գիտելիքները, կարողունակությունները և հմտությունները կիրառել գործնականում:
Այլ տեղեկատվություն	Դասի թեման էր՝«Երգ ու տաղ բաժնի» հայկական բանաստեղծուության հնագուն նմուշներ («Վահագնի ծնունդից»), թե ինչպես են ստեղծվել և մեզ հասել, **«Մեր լավաշ հացը»** բանաստեղծությունը (հեղ. Անահիտ Պարսամյան): Դասն անցկացվեց «Մամիկ» հյուրատանը: https://www.facebook.com › mamikguesthouse Սովորողները, ազգագրագետների մատուցմանբ, լսեցին նաև ժողովրդական խաղիկներ, երգեր ու տաղեր, առած-ասացվածքներ: Ունկնդրեցին ազգային երգ-խաղիկները, դրանց միջոցով ծանոթացան հայկական բանահյուսական ժառանգության արժեքներին, սովորեցին: Սովորողները մասնակցեցին լավաշի թխմանը, ապա համտեսեցին իրենց թխած

	հացը՝ մի կտոր արթուն հուշ տանելով հայկական մշակութային ժառանգության հարուստ անդաստանից: Սովորողները հաղորդակից դարձան ազգային մշակույթին, սովորություններին, երգին, խոհանոցին, կենցաղին, տարազին, տեսան մառանը, թոնրատունը: Ինտերակտիվ դասը հաջողված էր, բովանդակալից և բարձր արդյունավետությամբ, իսկ փորձը՝ ուսանելի և կիրառելի:

1-2 էջ

Օգտագործված գրականության ցանկ

1. Ս. Խաչատրյան «Ուսուցման արդյունավետ հնարներ»
2. Соловьёва Т. И., Современные педагогические технологии в начальной школе, Молодой учёный,Ежемесячный научный журнал, № 6 (86) / 2015, стр. 684
https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
https://armenpress.am/arm/news/785546
https://www.facebook.com › mamikguesthouse

1 էջ

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր ● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) ● Նկարներ ● Արդյունքներ	



Ընդգրկված չեն հիմնական էջերի մեջ